


32608



N. Thompson of plan of 4/4/25

Report of property maintenance

22-4-1925

of

Հովհ

Մարտի 1-ին Մարտի 1-ին

Մարտի 1-ին
1-5-1975

Մարտի 1-ին

ՀՕԲ. Այս գրքի համարը պահպանված
է համարակցությամբ, այսինքն է համարակցության
համարը մի. Համարը Արտադրության
Պհ

ԼՆԿԱՐԱՆ ԵՎԵԼԻՅԵ

ԵՒ

ԱՆՈՐ ՀԱՌԻԹԻՒՆԸ. ՀԱՒԱՏՔԸ.
ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԸ

ԵՒ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

32608

Յ. ԱՐԵՍ. Կ

Բ. 247

ՊԵՅՕՂԼՈՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ՃՕՆՍՏԱՆԻ

1847



ԵՆԿԼԻԲԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԵՒ

ԱՆՈՐ ՀՆՈՒԹԻՒՆԸ, ՀԱՒԱՏՔԸ,
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՊԱՇՏՈՒՆԸ

ԵՒ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

ԼՆԳՂԱՅԻ նախկին բնակչաց անու-
նը Բրիտոն կ'ըսվէր, որ անկէ մեծն Բրի-
տանիաց անունը ելաւ : Ասոնք Բրիտոսի
գալէն առաջ հեթանոս և կռապաշտ էին :
Սարգազոհ կը մատուցանէին իրենց չաս-
տուածներուն, և մեռնելէն ետեւ հոգեփո-
խութեան կը հաւատային : Ուստի ինչպէս որ
Որոգինէս կ'ըսէ, (Ճառ 4. յաղագս Լճեկի-
էի) “Բրիտոս չեկած Բրիտանիաց ա-
զատ չէր բաղմաստուածութենէ” :

Բայց երջանկաբար՝ արդարութեան որդին
աշխարհ գալէն ետքը այս խաւարը երկար
ատեն չի տուեց : Սասն զի Կիլտաս Լնգղի-
ացի պատմիչ մը վեցերորդ դարուն սկիզբ-

ները այսպէս կը գրէ . « Բրիտոստո՝ ճշմարիտ արեգակը իր պայծառութիւնը ընդհանուր աշխարհի ցուցունելով՝ չէ թէ ժամանակաւոր երկնից հաստատութենէն , հապա երկնից ամենաբարձր կամարէն պարգեւեց իր ճառագայթները (այսինքն իր պատգամները) այս կղզիիս , որ չափազանց ցրտութեամբ պաղած , և երկրիս ամէն մասերէն առաւել տեսանելի արեգակէն հեռացած էր : Այս բանը Տիբերիոս Կեսարին թագաւորութեան ետքի տառնները պատահեցաւ » . և այլն : Իսկ Հռոմայեցւոց կայսր Տիբերիոս Կեսարին իշխանութիւնը՝ Բրիտոստի երեսուն ու եօթներորդ թուոյն վերջացաւ , սպա ուրեմն այն ժամանակները՝ կամ գուցէ քիչ մը ետքը Աւետարանը Բրիտանիայ մտած պիտի ըլլայ : Ինչ և իցէ՝ կ'երեւայ թէ , քրիստոնէութիւնը և Բրիտոստի Լսկեղեցին ինչպէս որ երկրիս վրայ սկիզբէն հաստատուած էր քրիստոնեայ ազգաց մէջ , անանկ ալ հոն հաս-

տատուեցաւ՝ Բրիտոստին մեռնելէն ետքը՝ երեսուն տարւան միջոցին մէջ , և Առաքելոց կենդանի եղած ժամանակը :

Հիմա կրնայ հարցը վեր թէ , քրիստոնէութիւնը առաջ որուն ձեռքովը հոն մտաւ : Այս բանիս վրայ զանազան վկայութիւններ կան , որոնց մէկ քանին՝ հիմա կը դնեմք հոս :

Լսեցե՛րիս . Յոյն պատմիչը՝ որ չորրորդ դարուն սկիզբները ողջ էր , և Լսկեղեցւոյ պատմութիւնը գրեց , կ'ըսէ իր աւետարանական ապացուցութեան երրորդ գրքին մէջ , « Εὐαγγελικὴ Ἀποδείξις » թէ՝ Առաքեալներէն ոմանք « Ովկիանոսէն Բրիտանիայի կղզիները անցան » .

« Ἐπὲρ τὸν Ὁκεανὸν παρελθεῖν ἐπὶ τὰς καλουμένας Βρετανικὰς Νήσους » Եւ Լիկեիօրոս Կալիստի ուրիշ Յոյն պատմիչ մը կ'ըսէ , (Պատմ . Լսկեղ . գիրք . 3 . գլ . 1) թէ՝ « Սէկ քանի Առաքեալներ՝ Լսկիպոս , Լիիրիկէ , և Ովկիանոսի հետեւ ահա-

մանները, և Բրիտանիայի կղզիները դացին, »

« Αἴγυπτον καὶ Λιβύαν ἄλλοι ἐλάγχανε, τοῖς δὲ ἐσχάτοις τοῦ Ὠκεανοῦ καὶ ταῖς Βρετανικαῖς Νήσοις, ἐφίστατο ἕτεροι »

Թէ՛ որոշորի՜ք՝ Լսորեստանու մէջ Սերիայի Լախիսկոպոսն ալ՝ յամի Տեառն 420 կը վիւ-
յէ Յունաց անկարգութիւններուն բուժմա-
նը Վրացոք իր գրած գրքին մէջ, « Ελ-
λήνων παθημάτων θεραπευτικῆς » (Գիրք •
Բ) • Թէ՛ « Ս'եր ձկնորսները և մարսաւոր-
ները և վրան շինողները (այսինքն առա-
քեալները) աւետարանական պատգամները
բոլոր մարդոց տարին • և չէ Թէ միայն Հռով-
մայեցիները և անոնց հպատակները համոզե-
ցին՝ Խաչեալին օրէնքները ընդունելու, հա-
պանաւ Հնդիկները, Լադովպացիները, Պար-
սիկները, Պրիդօնները՝ Լայլն » :

« Οἱ δὲ ἡμέτεροι ἀλιεῖς καὶ οἱ τελῶναι καὶ ὁ
σκηνοποῖος ἀπασιν ἀνθρώποις τοὺς Εὐαγγελικοὺς
προσενηγόχασι νόμους • καὶ οὐ μόνον Ῥωμαῖους
καὶ ὑπὸ τούτοις τελοῦντας, ἀλλὰ καὶ . . . »

Ἰνδοὺς καὶ Αἰθίοπας καὶ Πέρσας καὶ Βρετανοὺς
κ.τ.λ. δέξασθαι τοῦ σταυρωθέντος τοὺς νόμους
ἀνέπεισαν . »

Լըկորոք հարցումը այս կրնար ըլլալ,
Թէ՛ Լաքելոց որը գնաց Բրիտանիայ, ու
Լստարանը քարոզեց հոն :

Լնաստաս Լսորի՝ Լնտիքի Պատրիար-
քը՝ յամի Տեառն 629 մարտիրոսներուն չար-
չարանացը համար գրած գրքին մէջ կ'ըսէ,
Թէ՛ Յակոբոս Օւբեդեանը գնաց հոն :

Եւա Բպանիայի մէջ՝ Սէվեիի Լյսի-
աօրըս Լախիսկոպոսը հին և նոր կտակարանի
Սրբազան հեղինակներուն վրայօք գրած գրք-
քին մէջ (ԳԼ . 72) կ'ըսէ, Թէ՛ այս Լա-
քեալը Լստարանը « Սպանիայի, և արեւ-
մուտքի ժողովրդոցը քարոզեց » : Լյս ետքի
անունը՝ հին մատենագիրները շատ անգամ
Բրիտանիայի կղզիներուն համար կը գործա-
ծէին :

Եւ այց այս կարծիքը հաւանական չէ . ո-
րովհետեւ Յակոբոս առաքեալ Լրուսադէմի

մէջ նահատակուեցաւ յամի Տեառն 41, Լուսաբելոց ցրուելէն առաջ :

Նիկեփորոս Կալիստի (Պատմ. Լիկեդ. Պիքք. Բ. ԳԼ. 40) կ'ըսէ, թէ՝ Շմաւոն նախանձայոյդ « Տարաւ Լեւտարանը արեւելեան Ուկրանոս, և Յրիտանիայի կղզիները » : Յունաց Լիկեդեցոյ արարողութեանց մէջ (Սէնայիա) Սայիսի տասնին այս Լուսաբելին սոնալսութեան օրն է . որուն համար կ'ըսվի թէ՝ « Յրիտանիայ երթալէն ետքը, և շատերը Լեւտարանի լուսով լուսաւորելէն ետքը՝ անհաւատները խաչեցին զանիկայ, ու հոն թաղեցին » :

« Ὑστερον δὴ ἐν Βρετανίᾳ γεγόμενος, καὶ πολλοὺς τῷ λόγῳ τοῦ Εὐαγγελίου φωτίσαι ὑπὸ τῶν ἀπίστων σταυρωθεὶς καὶ τελειωθείς θάπτεται ἐκεῖ. »

Ուրիշ պատմիչներէն ըսող ալ կայ թէ՝ Սիմոն Պետրոս այն երկրին մէջ աշխատեցաւ :

Ինչպէս որ Լուսեբիոս Պամիրիւլիացի՝ յամի Տեառն 900 ին մօտ՝ կ'ըսէ Սիմոն Սէ-

թաֆօրաթիս Յոյն մատենագրին նայելով, թէ՝ Սիմոն Պետրոս « Լուսեբիւլի մէջ 12 տարի աշխատեցաւ, և 23 տարի՝ Հռոմայի, Բերիտանիայի, և արեւմուտքի քաղաքներուն մէջ » : Եւ Սիմոն Սէթաֆօրաթիս ինքը կ'ըսէ . (Բացատ. Պետրոսի և Պօղոսի սոնալսութեան . յունիս 29) թէ՝ « Պետրոս երկար ժամանակ Յրիտանիայի մէջ մնաց, և շատ մարդիկ Քրիստոսի հաւատքին բերաւ . և շատերը շնորհաց խօսքով լուսաւորելէն, և Լիկեդեցիներ հաստատելէն ետքը, և Եպիսկոպոսներ՝ Քահանայներ՝ և Սարկաւաքներ ձեռնադրելէն ետքը՝ Յերոն Կեսարիին տասներկու երրորդ տարին (որ է Քրիստոսի 66 երրորդ տարին) կրկին Հռոմայ դարձաւ » :

« Ἐπιμείνας τε ἐν Βρετανίᾳ ἡμέρας τινὰς, καὶ πολλοὺς τῷ λόγῳ φωτίσας τῆς χάριτος ἐκ κλησίας τε συστησάμενος, ἐπισκόπους τε καὶ πρεσβυτέρους καὶ διακόνους χειροτονήσας, δωδεκάτω ἔτει τοῦ Καίσαρος Νέρωνος αὐθις εἰς Ῥώμην πα-
ραγίνεται. »

Հին Մեգրիայի տարեգրութիւնները՝ Պետրոսին Մեգրիայ երթալուն աւանդութիւնը կը հաստատեն . և կրկին կրկին յիշուած՝ աւանդութիւն մը կայ այս պատմութիւններուն մէջ, թէ՛ նոյն Մաքեալը պիտառաջ հիմը դրած է այն Լիկեղեցոյն , որ հիմա Լօնտրայի մէջ Ուէսդմինսթրի մենաստանն է :

Չեմ ուզեր ըսել, թէ որչափ հաւատ ընծայելու է այս վկայութիւններուն . բայց ամենեւին զօրաւոր պատճառ մը չի կայ երկբայելու թէ՛ Պօղոս առաքեալ արդեօք Մեգրիայի մէջ Մետարանը քարոզէ :

Երոնիմոս (Բացատ . յաղագս Մովսայ . գլ . Ե .) կ'ըսէ, թէ՛ « Պօղոս ծովէ ծով անցաւ արդարութեան որդոյն ընթացքը բռնելով . որուն վրայօք կը կարգանք (Սաղմ . ԺԸ . Ծ .) թէ՛ երկնից ծայրերէն է անոր ելքը , և իրեն շրջանը մինչև անոր ծայրերը » : Եւ կ'ըսէ ալ թէ՛ « Իր քարոզելու փափաքը կատարուելէն ետքը ալ երկիր չի մնաց » :

Ուրիշ տեղ մըն ալ՝ (Իր Հոցակ եկեղեցական ըսուած մատենագրութեան մէջ *) կ'ըսէ թէ՛ « Պօղոս իր բանտարգելութենէն ետքը Մետարանը արեւմտեան երկիրներուն մէջ քարոզեց » :

Կղեմէս հոռմայեցին կ'ըսէ, (Ուղղթ առ Կորնթ .) թէ՛ անկէպ « Բանին քարոզիչն եղաւ արեւելքի և արեւմուտքի մէջ » : Եւ թէ՛ « Մնիկայ արեւմուտքի ծայրերը գնաց » :

« Κηρὺς γενόμενος ἐν τῇ ἀνατολῇ καὶ ἐν τῇ δύσει, τὸ γενναῖον τῆς πίστεως αὐτοῦ κλέος ἔλαβεν δικαιοσύνην διδάξας ὅλον τὸν κόσμον, καὶ ἐπὶ τὸ τέρμα τῆς δύσεως ἐλθὼν, » κ.τ.λ.

Եւս բռները՝ այսինքն » Լրեւմուտքի սահմանները , և « Լրեւմուտքի մասերը » , և մասնաւորապէս առաջինը շատ կը գործածէին հին մատենագիրները՝ Բրիտանիայի կղզիները ցուցունելու մտօք , վասն զի ան տեղները Մերիկայ չէր գիտցըված , և Բրիտանիան իրօք « Լրեւմուտքի սահման » էր .

* Liber de Scriptoris Ecclisiasticis.

անատենի մարդոց՝ իրենց գիտցած բոլոր երկիրներուն ամենէն հեռուն Մեծմուտքը ըլլալով։ Թէոդորիտ՝ յամի Տեառն 400 մէջ կը բերէ Պօղոսին այն խօսքը, (որ գրուած է Բ. Տիմոթ. Դ. 16—17 .) Թէ՛ առջի ատենաւնին մէջ մէկը ինծի կոնակ չի կեցաւ։ Հապա ամէնքը իս թողուցին . ան իրենց (յանցանք) չի սեպվի։ Բայց Տէրը ինձի օգնեց, և ինձի ուժ տրվաւ, որ իմ ձեռքովս քարոզութիւնը հաստատվի, ու բոլոր հեթանոսները լսեն . և ես ան առիւծին բերնէն խալըսեցայ, ու ետքը կ'ըսէ Թէ՛ Պօղոս « Իր ջատագովութենէն ետքը ազատեցաւ, ու Սպանիայ և ուրիշ ազգաց մէջ գնաց՝ վարդապետութեան լոյսը հոն տանելով »։

Եւ յայն մատենագիրը (Տաղաթս ճԺԶ երրորդ սաղմ.) կ'ըսէ Թէ՛ անիկայ այսինքն Պօղոս՝ « Դաւովուն մէջի կղզիներուն բարեք տարաւ »։

Սուրբ Գրքի խոսքովս Երուսաղէմի Պատրիարքը կանուխ եօթներորդ դարուն՝ Լուսբելոց ծը-

նընդեանը վրայ գրած քարոզին մէջ կ'ըսէ Թէ՛ Պօղոս՝ « Լեւտարանը Սպանիայի և Իսրիտանիայի մէջ քարոզեց »։

Հունաց եկեղեցւոյ Սէնայիային մէջ (Սէնայիօն՝ մարտի 15 երրորդ աւուր .) կ'ըսվի Թէ՛ Պօղոս՝ Լեւտարաբուրը Իսրիտանիայի մէջ Լպիսկոպոս ձեռնադրեց . (որուն վրայօք յիշված է Պօղոսի հոռմայեցւոց թուղթին մէջ . ԺԳ . 10)։

Եւ ահա ասանկ կ'ըսվի վերոյիշեալ Սէնայիային մէջ . « Լնիկայ (այսինքն Լեւտարաբուր) եօթանասուն աշակերտներէն մէկն էր . և Պօղոս Սրբազան Լուսբեային կը հետեւէր՝ Լեւտարանը բոլոր աշխարհ քարոզելով, և անոր կը ծառայէր։

Եւ Լնիկէ Լպիսկոպոս ձեռնադրվեցաւ Իսրիտանացւոց երկրին մէջ, որոնք վայրի և բարբարոս Ժողովուրդ մըն էին։ Լնիկամ մը ծեծեցին զանիկայ, և անգամ մըն ալ հրապարակի մէջ քաշկըռտելով տարին։ Բայց ինք շատերը Իսրիստոսի գալու յորդորեց, և Լնիկեցիներ հաւաքելով, և Բահանաներ ու

Սարգիսազներ ձեռնադրելով իր կեսներ
վերջացուց ։

“ Οὗτος ἦν εἰς τῶν Ἑβδομήκοντα μαθητῶν
ἠκολούθησε δὲ τῷ ἁγίῳ ἀποστόλῳ Παύλῳ κηρύτ-
των τὸ Εὐαγγέλιον εἰς πᾶσαν τὴν οἰκουμένην ,
διακονῶν αὐτῷ . Ὑφ’ οὗ καὶ Χειροτονηθῆς ἐπι-
σκοπος εἰς τὴν τῶν Βρετανῶν χώραν , ἀγρίῳ ἀν-
δρῶν καὶ ὠμοτάτων . παρ’ ὧν ποτὲ μὲν τυπτόμενος ,
ποτὲ δὲ καὶ κατὰ νῆς ἀγορᾶς συρόμενος , πολλοὺς
ἔπεισε τῷ Χριστῷ προσελθεῖν . Ὅθεν καὶ Ἑκκλη-
σίας συστήσμενος καὶ πρεσβυτέρους καὶ διακόνους
ἐν αὐτῇ καταστήσας ἐτελείωθη . ”

Ըստից բողոքէն յայտնի է որ՝ Բաքեաւ-
ներէն ոմանք , մանաւանդ Պօղոս Ընդդիւ-
սի մէջ Վրիստոսի Լկեղեցին հաստատեց ։

Սէկ հաստատ աւանդութիւն մը կայ .
կ'ըսվի թէ՝ Ընդդիւսցի Պրան անունով իշ-
խան մը Հռոմայ գերի ինկեր է՝ Վրիստոսի
ծէ երորդ տարւոյն մէջ . և քանի մը տարի
հոն մնալէն ետքը աղատեր է ։ Ըսիկայ հոն
բանտարգեալ եղած ժամանակը՝ Պօղոս ա-

ռաքեալն աւհոն ան բանտին մէջ կապված է
եղեր . և գուցէ Պրան այս Բաքեաւին քա-
րոզութեամբը քրիստոնեայ եղած է , և իր
կրկին Վրիտանիայ վերադառնալուն՝ քրիս-
տոնէութիւնը հետը բերած է . և բողոքովին
անհաւատալի չերեւար , որ Պօղոս անոր հետ
ընկերացած չէր ։ Իսկ ինչ և իցէ՝ տարա-
կոյս չի կայ , թէ քրիստոնէութիւնը Բաքե-
ւոց ժամանակը , և հաւանականաբար՝ 60 ե-
րորդ թուոյն Վրիստոսի Վրիտանիայ մտած
է ։ Եւսա ուրիմն Ընդդիւս Լկեղեցին ամենէն
առաջ հաստատված , և երկրիս վրայ ամե-
նէն հին Լկեղեցիներուն մէկն է ։ Ընանի է
նէ՝ ի՞նչպէս ոմանք կ'ըսեն թէ՝ Լուսերը ,
կամ Կալվինը հաստատեր է , որոնք միայն
300 տարի առաջ կային ։

Հիմայ նախկին Հայրապետներուն մէկ
քանիներէն պիտի ցուցունեմ թէ՝ Վրիտա-
նիոյ Լկեղեցին քրիստոնէութեան առջի դա-
րերուն մէջ ի՞նչպէս կը ճանցըվէր , և ի՞նչ
յարգութիւն ունէր ։

Որոգինէս Յունաց ընտիր մատենագիրը՝
Լազեկիէլի չորրորդ գլխուն վրայ գրած ճա-
ռին մէջ կ'ըսէ թէ՝ « Բրիտանիոյ երկիրը
կամ Սաւրիտանացւոյ երկիրը՝ Վրիստոսի
գալէն առաջ զոր ատեն միոյն Լատուծոյ հա-
ւաւորը ընդունեց » :

Բայց հիմայ աշխարհի այն մասերուն
մէջ եղող Լազեկեցիներուն հետ մէկ տեղ՝
բոլոր երկիր ցնծութեամբ Խորայէլի Լատու-
ծոյն կ'աղաղակէ » : Եւ դարձեալ Ղուկա-
սու վեցերորդ գլխոյն վրայ գրած ճառին
մէջ կ'ըսէ . « Տէր Թրիզին զօրութիւնը ա-
նոնց հետն է , որոնք մեր աշխարհէն զատ-
ված են . (այսինքն չմտով բաժնւլած են) » :
Լաւսինքն Բրիտանիայի (կղզիին) մէջ , Սա-
ւրիտանիայի մէջ բնակողներուն հետն է , և
արեգակին տակը գտնւլած բոլոր իր ան-
ուանը հաւատացողներուն հետն է » :

Եւրդ՝ Որոգինէս երրորդ դարուն կէսին
Լազիպտոս կը բնակէր , և ասիկայ կը ցուցու-
նէ թէ՝ այն հին ժամանակը՝ այն հեռաւոր

երկրին մէջ Բրիտանիայի Լազեկեցիին վրայօք
տեղեկութիւն ունին եղեր :

Տերտուղիանոս՝ որ երկրորդ դարուն մէջ
Լափրիկէ կը բնակէր , Լուէից դէմ գրած գրո-
քին մէջ կ'ըսէ , (գլ . 5) . « Բրիտանիայի
այն մասերը , ուր որ Լատուծոցները չեն
կրնար մտնալ , Վրիստոսի հպատակ են » :
Ու նաև կ'ըսէ , « Թէեւ Բրիտանները Ովկիա-
նոս ծովով պատած են , բայց Վրիստոսի
Թագաւորութիւնը ու անունը ամէն տեղ
գնաց , ամէն տեղ կը հաւատան անոր , ամէն
տեղ կը Թագաւորէ , և ամէն տեղ կը պաշ-
տրվի ան » :

Ղիոկղետիանոս հեթանոս կայսրին հա-
լածումը , որ սկըսեց արեւելքի մէջ , ետքը
մինչեւ անգամ Բրիտանիայ գնաց , և հոն
տեղի քրիստոնեայները ան ժամանակը անկէ
մահ կրեցին :

Լաւկայ եղաւ Վրիստոսի 503 թուոյն ,
և ան ժամանակը Լազեկեցին շատ աղէկ հաս-
տատված էր Լաւղիայի մէջ :

Նիկիոյ այն մեծ ժողովքը եղաւ յամի Տեառն 325, ու կ'ըսվի թէ՛ Մեգզղեացի Եպիսկոպոս մը կար հոն :

Ճշմարիտ է որ Մեգզղիոյ Եկեղեցին ընդունեց նոյն ժողովքը , և մինչեւ հիմա ընդունած է : Նոյն ժողովքը մեծն Կոստանդին կայսրը ընել տրվաւ . ու ետքը ընդհանրական նամակ մը գրեց բոլոր ողջամիտ Եպիսկոպոսներուն , որոնք որ ժողովքին մէջ գտնուված չէին : Մին նամակին մէջ կ'ըսէ թէ՛ Մեգզղիոյ Եկեղեցին ուրիշներուն հետ մէկ տեղ կ'ընդունի նոյն ժողովքը :

Եւսեբիոս այն մեծ եկեղեցական պատմիչը՝ որ նոյն ժողովքէն քիչ մը առեն ետքը սկըսեց գրել , կը պատմէ այս բանը իր գրած Կոստանդինոսի վարքին մէջ . (գիրք . Ե . 41 . 18) :

Եթանասիրոս ևս Եղէքսանդրիոյ Պատրիարքը , և Եգիպտոսի ուրիշ Եպիսկոպոսները՝ որոնք մէկ տեղ ժողովուեցան , և ճշման կայսրին գրեցին ճշմարիտ հաւատքին

համար՝ յամի Տեառն 383, կ'ըսեն իրենց նամակներնուն մէջ , « Եւս (Կաթուղիկէ) հաւատքը Նիկիոյ մէջ ժողովուած հայրերը խոստովանեցան , և ամէն տեղի Եկեղեցիները ընդունեցին զանիկայ . այսինքն՝ անոնք որ , Սպանիայի՝ Բրիտանիայի՝ և Կօլի մէջ են , և այլն . նաեւ արեւելքի Եկեղեցիները՝ բաց 'ի մէկ քանիներէն , որոնք Երիսոսի հերետիկոսութեանը խոտորած են : Սաւն զի մենք ասոնց ամենուն գաղափարը գիտենք փորձով , և իրենցմէ նամակներ առած ենք » :

« Ταύτην πίστιν ὡμολόγησαν οἱ ἐν Νικαίᾳ συνελθόντες πατέρες καὶ ταύτη σύμφωνοι τυγχάνουσι· πᾶσαι αἱ κατὰ τόπον ἐκκλησίαι. αἵτε κατὰ τὴν Ἰσπανίαν, καὶ Βρετανίαν καὶ Γαλλίαν. κ.τ.λ. καὶ αἱ κατ' ἀνατολᾶς Ἐκκλησίαι πάρεξ ὀλιγων τῶν τὰ Ἀρείου φρονοούντων. Πάντων γὰρ τῶν προσηρημένων τῇ πείρᾳ ἐγνώκαμεν τὴν γνῶμην, καὶ γράμματα ἔχομεν. »

Սի և նոյն է՝ Փռանսայի մէջ Բօիքգըր-տի Հիլարիոս Եպիսկոպոսին վկայութիւնն

ալ, որ արսորվեցաւ Ֆիճիայ՝ փոքր Լսիայի մէջ, որ հիմա Ղօնիայ կ'ըսվի: Լսիայ հոն Լըրիսուութիւնը դատապարտող ժողովքին վըսյ գիւքք մը գրեց՝ յամի Տեառն 358: Եւ այս գրքին սկիզբը՝ « Բրիտանիոյ դաւառներուն Եպիսկոպոսներուն » և ուրիշներուն կը գրէ ու կ'ըսէ, « Կը գոհանամ Լսուածոց, որ դուք հաստատուն մնացիք, և այն ատելի հերետիկոսութեան ամէն մէկ ապականութիւնովը չի վնասեցաք »:

Եւ այն դարուն եղած ուրիշ ժողովքներուն մէջ ալ Բրիտանիոյ Եկեղեցիէն Եպիսկոպոսներ կային: (Օրինակի տղաբաւ յամի Տեառն 314. Գաղղիա Լըրէս քաղաքը եղած ժողովքին մէջ երեք Լնգղիացի Եպիսկոպոս կային: Կոստանդ և Կոստանդին մեծըն Կոստանդիանոսի տղաքները՝ 347 ին Լնգղիացոց Եպիսկոպոսները ժողովքի մը հրաւիրեցին, որ եղաւ Եւրոպական Տաճկաստանի մէջ Սարտիքա քաղաքը, որ հիմա Կոփիսյուլ մօտ քաղաքն է:

Եւս ժողովքը՝ Լըրիսուութիւնը դատապարտելու համար եղաւ. և Ս. Լսանասիոս Լըրիսեաններուն դէմ գրած երկրորդ գրքըին սկիզբը կ'ըսէ թէ՝ « Լնգղիացոց Եպիսկոպոսները հոն ներկայ էին »: Եւ մնացեալ Լսոնց մէ ռմանք ալ Խալիա Լըրիսեում ժողովքին մէջ գտնուեցան յամի Տեառն, 357: Եւ Լսոնց բոլորէն կրնանք հասկընալ թէ՝ Լնգղիացոց Եկեղեցիին այն հին դարերուն մէջ հաստատված էր, և իրեն Եպիսկոպոսներովը կը կառավարվէր, և Կաթոլիկէ Եկեղեցիներուն անդամներուն մէջ կը գիտցըվէր ու կը ճանչցըվէր:

Կ'երեւայ թէ՝ ան ժամանակը երեք Լըրեպիսկոպոս կար Լնգղիայի մէջ, և անոնց տակը զանազան Եպիսկոպոսներ:

Եւ այն դարուն վտանգաւոր միջոցին մէջ՝ երբ որ Լըրիսուութիւնը Բրիտանեական Եկեղեցոյն մեծ մասին վըսյ տարածված էր, Լնգղիա բոլորովին աղատ մնաց անկէ, (ինչպէս որ Ս. Լսանասիոս վկայեց), և հաս-

տառաբար ճշմարիտ հաւատքը բռնեց մնաց :

Ղաւմանակէ մը ետեւ կը գտնամք որ Միգ-
ղիացւոց Լիկեղեցին աշխարհի զանազան մա-
տերուն մէջ կը ճանչցըվէր : Ինչպէս որ Ոս-
կերերան կ'ըսէ՝ իր գրած « Բրիտանոսի Մտ-
ուածութեանը » ապացուցութեանը մէջ, թէ՝
« Բրիտանացւոց կղզիները՝ որոնք այս ծո-
վուն անդիի կողմն են, և Ովկիանոսի մէջն
են, Մետաքանին զօրութիւնը իմացան .
վասն զի հոն ալ Լիկեղեցիներ ու Սեղան-
ներ շինվեցան » :

« Αἱ Βρετανικαὶ νῆσοι αἱ τῆς θαλάττης ἐκ τῶς
κειμένου ταύτης, καὶ ἐν αὐτῷ οὔσαι τῷ Ὠκεανῷ,
τῆς δυνάμεως τοῦ ῥήματος ἦσθοντο. καὶ γὰρ κα' κεί
Ἑκκλησιαίαι καὶ θυσιαστήρια πεπήγασι. »

Նաև իր ճառին մէջ՝ « Սուրբ Գիրքե-
րը կարգալուօգտին համար » : « Թէ որ
Ովկիանոսը անցնելու ըլլաք, և այս Բրի-
տանացւոց կղզիները, և թէ որ սեւ ծովը
նաւելու ըլլաք, և եթէ Հարաւային երկիր-
ները երթալու ըլլաք, պիտի լսէք որ ամէն-

քըն ալ Սուրբ Գրոց մէջ եղած բաները կը
փնտրուեն տարբեր ձայներով, բայց չէ թէ
տարբեր հաւատքով . այլ և այլ ընդունե-
րով, բայց մէկ մտքով » :

« Καὶ εἰς τὸν Ὠκεανὸν ἀπέλθης, καὶ πρὸς τὰς
Βρετανικὰς νήσους ἐκεῖνας. καὶ εἰς τ' Εὐξείνῳ
πλούσης πούτον, καὶ πρὸς τὰ νότια ἀπέλθης μέρη,
πάντων ἀκούσῃ πανταχοῦ τὰ ἀπὸ τῆς γραφῆς φι-
λοσοφούντων, φωνὴ μὲν ἑτέρα πίστη δὲ οὐχ ἑτέρα,
καὶ γλώσση μὲν διαφόρῃ διόνοια δὲ συμφώνῃ. »

Միկայ Երեւելբէն մէկ վկայութիւն
մըն է. և այս տեսակ վկայութիւնները՝ ալ
բաւական սեպելով, միայն մէկ հատ մըն
ալ յիշեմք, որ Երեւմուտբէն է : Ս. Հե-
րոնիմոս Լատինացւոց Լիկեղեցւոյն գիտնա-
կան հայրապետը՝ յամի Տեառն 550, իր Հե-
ղոսորոսի գրած երրորդ նամակին մէջ կ'ը-
սէ, « Թէ և Բրիտանոս չեկած՝ աշխարհիս
բնակիչները՝ նդկաստանէն մինչեւ Բրի-
տանիայ, և այլն, ինքրզինքնին կռապաշտա-
կան արարողութեանց տըված էին, բայց

Հիմա բոլոր Ազգաց ճայները և գերբերը
ճշմարտապէս Վրիստոսի չարչարանքը ու
յարուժիւնը կը բարոյեն :

Այս զուրցըվածքը ճշմարիտ եղած չի
պիտի ըլլար , թէ որ 1) . Հերոնիմոս այս
բանը գրած ժամանակը Ռիտանիան Վր-
րիստոսի ճշմարիտ հաւատքը բռնած ճանչ-
ցած չըլլար :

Եսիկայ՝ ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ՝ (Հա-
տոր . Ա . թղթ . 17) , թէ՝ « Պրիգօնները
թէ և աշխարհիս բազմամարդ մասէն զատ-
ված՝ կը թողուն իրենց Երեւմտեան արեւ-
գակը , և անանկ մէկ կլիմայ մը կը փնտը-
ռեն , որ անոր վրայ ամենեւին տեղեկութիւն
մը չունին , միայն թէ լսած են , և Աստ-
ուածաշունչի պատմութենէն կարգացած » :

Այս խօսքերը Երուսաղէմի ուխտագնա-
ցութիւնը կը ցուցունէ , որ կ'ընէին Բրի-
տանացիք ուրիշներուն հետ մէկ տեղ :

Նաև դարձեալ կ'ըսէ Լաւգրիոսի գրած
Թուղթին մէջ , թէ՝ « Կօլն , Բրիտանիայի ,

Պարսկաստանի , և ուրիշ տեղերու Լեկեղե-
ցիները մի և նոյն Վրիստոսը կը պաշտեն ,
և հաւատոյ մի և նոյն սուաշնորդովը կը
կառավարվին » : Հոս միտքերնիս՝ Անգղի-
ացուց Լեկեղեցւոյն մինչև Հիմայ ունեցած
պատմութիւնը ընել չէ . ոչ ալ անոր փոփո-
խութեանցը վրայօք պատմեմք պիտի . վասն
զի անոր պատմութիւնը չեմք գրեր կոր :
Այլ մեր մի միայն նպատակը անոր՝ Վրիս-
տոսի Կաթողիկէ Լեկեղեցիին մէկ մասը ը-
լալը ցուցունել է : Առջի զրուցածներնիս բա-
ւական են հաստատելու թէ՝ Վրիստոնէ-
ութեան կանոնա դարերուն մէջ հիմնըված
էր ան , և Երեւելքի ու Երեւմտքի մէջ
ճշմարիտ Լեկեղեցւոյն մէկ մասը կը ճանչ-
ցըվէր ու կը յարգըվէր :

Ան ատեններէն մինչև Հիմա շարունակ
կը կենայ , ու տակաւին իր նախկին վիճա-
կին մէջ կ'երեւայ Անգղիայի մէջ Վրիս-
տոսի Լեկեղեցին :

Հիմայ հոս մէկ ուրիշ դիպուած մը պի-

տի պատմեմ, որով կը հասկըցվի թէ՛ ինչ սերտ միութիւն մը կար Արեւելեան և Արեւմտեան Լակեղեցիներուն մէջ տեղը :

Եթեմերորդ դարուն վերջը Անգղիոյ Լակեղեցւոյն Առաջնորդը կամ Եպիսկոպոսը Յոյն մըն էր՝ անունը Թէոդորոս՝ Տարսոն ծնած փոքր Ասիայի մէջ :

Ասիկայ խիստ արժանաւոր մարդ մը ըլլալուն համար՝ Քեանդըպէրրիի Արքեպիսկոպոս, և բոլոր Անգղիոյ Առաջնորդ ընտրուեցաւ :

Այն երեւելի Աթոռը՝ հաղիւ թէ այս մարդէն առաւել արժանաւոր մէկը նստաւ :

Քսան ու երկու տարի հովուեց Լակեղեցին, և յամի Տեառն 690 մեռաւ՝ 88 տարեկան :

Անգղիոյ Լակեղեցին ընաւ չի կրնար մոռնալ անոր ըրած երախտիքները : Էթմանոսները քիչ ժամանակ առաջ Պերմանիայէն եկեր կոխեր էին նոյն երկիրը :

Քրիստոնէութիւնը չափազանց նեղու-

թիւն կրեր էր, ու Լակեղեցին զանազան խռովութիւններով նեղած էր : Թէոդորոս հանգարտեցուց այն բոլոր հակառակութիւնները, ամէն Եպիսկոպոսներուն աթոռին ու վանքին այցելութեան ելաւ, և ամէն բան կարգի դրաւ :

Պարատուններ հաստատեց, որոնց մէջ Յունարէն ու Ատիններէն լեզուներ, և Թուաբանութիւն, և Աստղաբաշխութիւն, և այլն կը սորվուէր :

Էթմանոսաց յարձակմունքէն դատարկացած աթոռները նորոգեց, ու զանազան նոր աթոռներ ալ հաստատեց : Խորախոյս տրվաւ Լակեղեցիներ շինվելու, ու տասանորդներ կապեց զանոնք նայելու :

Ասոր առաջին հաստատած դպրոցները () քսֆօրթի մէջ էին, որ տակաւին Անգղիայի ուսումնականութեան երեւելի աթոռներուն մէկն է :

Լակեղեցիներուն մէջ երգ խօսեց . տնանկ մէկ սովորութիւն մը, որ մինչեւ հիմայ կայ :

Կ'երեւայ ևս թէ՛ այն առաջին մարդն էր , որ բժշկականութեան գիտութիւնը Լ'նգղիայ խօթեց :

Եւ Լ'րեւելքէն Յունաց Հայրապետներուն ձեռագիրները ձեռք ձգեց . այսինքն , Ս . Բարսղի , Ս . Լ'թանասի , Ոսկեբերանի , ևայլն :

Կաւ Յունաց առաւել Տին գրութեանցը ծանօթացուց զանոնք . ինչպէս են՝ Հոմերոսի և Լ'րիստոտիլի գրուածքները , և դպրատանց մէջ կարգացունել տրվաւ զանոնք :

Եւս գործքերը մինչեւ Տիմայ Լ'նգղիայ յի մէջ գիտեն ու կը կարդան :

Լ'նորատները Տիմակլան պէս մէկ թաղաւորով մը էր կառավարվէր . հապա զանազան իշխաններու մէջ բաժնեւժէ էր երկիրը : որոնք շատ անգամ իրարու վրայ ծեծ կը բանային : Լ'սիկայ անգամ մը անոնց երկուքին մէջ տեղ միջնորդութիւն ընելով յամի Տեառն 679 խաղաղութիւն ըրաւ :

Լ'նգղիացուց Լ'կեղեցւոյն Տիմակլան գրութիւնը ան է որ , ամէն մէկ տեղի ժողովուրդին համար Ռեմական Լ'կեղեցիները լաւու են . այս բանը նոյն մարդը սահմանեց . վասն զի մինչև ան ժամանակը Կարգաւորներուն լամներ մէյտեղ Լ'պիսկոպոսներուն քովը , կամ վանքի մը մէջ կը նստէին : Ինք ցրուեց զանոնք բոլոր նոյն երկրին վրայ , որ առ հասարակ ամէն ժողովուրդ Լ'ետարանի վարդապետութիւնը լսեն , և ինչպէս որ ըսի՝ Լ'կեղեցիներ շինել տրվաւ անոնց համար : Եւս Լ'կեղեցիներուն տասանորդներ կապել տրվաւ երկրին բերքերէն , ևայլն :

Եւ այս ճամբով Լ'նգղիոյ Լ'կեղեցիները առ հասարակ մինչև Տիմա կը պահվին :

Կաւ վանքեր հաստատեց Ս . Բարսղ Հայրապետի կանոններով , և զանոնք Վրիստոնէից դպրատուններ ըրաւ՝ տղոց կրթութեան և վարժութեան համար , մանաւանդ որքերու համար :

(Թ)է այս վանքերու և դպրատուններու հաստատութիւնը, և թէ Թմնական Լիկեզեցիներ հաստատելու սովորութիւնը՝ և առնոց եկամուտներ կապելը, Լրեւելքի սովորութիւններէն առած կ'երեւայ, ուր որ իր կեանքին մեծ մասը անցուցած էր:

Նաև Լիկեզեցւոյ գործքերը կարգադրելու, և անիկայ բարոյք կառավարելու համար՝ կանոններ շինվելու պատճառաւ՝ Լիկեզեցիներու և Լիկեզեցականներու ժողովքներ սահմանեց, և պատմութիւններ պահվելու համար կարգ կանոն դրաւ, որ անցեալ դիպուածներուն յիշատակութիւնը մտքէ չելլէ:

Լիկեզեցւոյ Լիկեզեցւոյն հին մէկ վանահայրը՝ (որ Թեոդորոս Լրքեպիսկոպոսէն քանի մը տարի ետքը ապրեցաւ), կ'ըսէ թէ՝ «Շատ աղէկ օրինակ մըն է, որ Յոնները (անտարակոյս Լրքեպիսկոպոսը նշանակելով) յիշատակ թողուցին մեզի՝ մտքէ չելլելու համար գրի անցունել ան ամէն բա-

ները, որ կ'ուզէին մեզի սորվեցընել: Սերժապէս շատ հաւանական է որ՝ այս մարդէն ՚ի զատ ոչ երբէք մէկ ուրիշ մարդ մը աւելի բան մը ըրած է Լիկեզեցւոյն համար:

Լյս բաղմբախտ մարդը առ հասարակ ամենուն սիրելի մեռաւ. և մինչև հիմա առնոր յիշատակութիւնը առանց մէկ արատի մը կը ճանչցուի, և բարի գործքերու մէջ արդիւնաւոր, որոնց ձեռնամուխ եղաւ ու կատարեց:

Լյս բարեյիշատակ անձը Վրեանդրեպէրիի Ս. ()գոստինոսի Լիկեզեցւոյն մէջ թաղվեցաւ, որ տակաւին Լիկեզեց Լրքեպիսկոպոսի աթոռն է:

Եւ պատմվի ալ թէ՝ իններորդ դարուն Թեոդորոսէն գրեթէ 200 տարի ետքը՝ Լիկեզեց Լրքեպիսկոպոսը թագաւորը երբ որ լսեց թէ՝ Լրեւելքի Վրիստոնեայները նեղութիւն կը կրեն Սարակինացւոց յարձակմունքէն, Լիկեզեց մը խրկեց իր պալա-

տականներէն մէկուն հետ, որ երթան օգնութիւն ընեն անոնց : Թագաւորին հրամայածին պէս ըրին անոնք, և հայրենիքնին դարձան յամի Տեառն 884 :

Ասկէց յայտնի է որ, մինչև իններորդ դարը Անգղիացւոց և Արեւելեան Ակեղեցիներուն մէջ տեղ բարեկամական կապակցութիւններ կան եղեր : Անպէս խափանեցան անոնք : Հայտնի է որ, ըստ մեծի մասին Հռոմայի Պապին չափազանց զօրութենէն եղաւ, որ բոլոր Արեւմուտք տարածեցաւ, և շնորհող եղաւ հաղորդակցիւ վասն զի այն պատեն Ատինացւոց Ակեղեցին իր հաղորդակցութիւնը հունաց Ակեղեցիէն կտրելուն համար, Արուսայի ուրիշ Ակեղեցիներն ալ գրեթէ հարկաւ անոր պիտի հետեւէին :

Անգղիոյ Ակեղեցին առաջուց անկախ էր Հռոմայու Ակեղեցիէն : Բայց քանի որ Պապը զօրացաւ, Անգղիայ ալ կամաց կամաց անոր հպատակ եղաւ :

Անգղիոյ Ապիսկոպոսներէն ու Թագաւորներէն շատերը գէմ դրին, բայց այն ժամանակները, և մանաւանդ տասներկու երորդ դարէն մինչև տասնհինգերորդ դարը Պապին զօրութիւնը անանկ անսահման եղաւ որ, բնաւ մէկը արգելամբ գէմ չէր կրնար կենալ անոր : Այս կերպով մինչև տասն ու վեցերորդ դարը տեւեց այն զօրութիւնը, որ ալ անկէ ետքը մէկ մեծ փոփոխութիւն մը եղաւ Անգղիացւոց Ակեղեցւոյն մէջ :

Հռոմայու Ակեղեցւոյն հետ հաղորդութիւն ունեցած ժամանակը շատ արը վէր էր :

Այնքերը որ Բարսեղ Հայրապետի պարզ և բարի կանոններով հաստատուած էին, տարբեր դրութեան դարձեր էին, և անոնցմէ շատերը այս դրութեամբ պղծութեան այրեր եղեր էին : Ակեղեցւոյ արարողութիւնն ալ Անգղիարէն լեզուով չէր, Ատիններէնի փոխվեր էր, որ քիչ մարդիկ

կը հասկընային : Վաւարանի վարդապետութիւնը՝ որ նախկին Եկեղեցւոյն մէջ ամենեւին գիտցըված չէր, Եկեղեցին խօթերէին բոլոր անոր վերաբերեալ աւելորդապաշտութիւններով :

Սրբոց ընծայվելու յարգութիւնը՝ իբր Լստուածներ պաշտելու դարձեր էր :

Ժողովուրդին չէին թողուր, որ մեր փրկիչին սահմանադրածին պէս ու նախկին Եկեղեցւոյն գործածածին պէս առնեն Սուրբ Հաղորդութիւնը . հապա միայն Վրիստոսի մարմնոյն մասնակից կ'ընէին, և արիւնը կ'արգիլէին անոնցմէ : Եկեղեցականները՝ որ առաջուց կարգըված էին, ետքը բոլորը մէկէն ստիպվեցան մինակ մնալու : Ուրիշ բաներ յիշատակել ալ հարկաւոր չէ :

Հռոմացու Եկեղեցւոյն բոլոր գրութիւնը Եկեղեցիին մէջ մտաւ, և Պապը՝ ինչպէս որ իր Եկեղեցիին մէջ, անանկ ալ Լնգղիոյ Եկեղեցւոյն մէջ մի և նոյն իշխանութիւնը կը վարէր :

Ինք իր ուղածին պէս Եկեղեցւոյ պաշտօնեայնները կարգի դնելը իրեն սեպհականեց. և այնքան շատցաւ Խաղաքացւոց թիւը, որոնք ինք նոյն երկիրը խրկեր էր՝ Եկեղեցական վիճակաւորութիւններ առնելու, որ ժամանակ մը Լնգղիայի մէջ ասոնց հասոյթը թագաւորին եկամուտէն շատ անցաւ :

Լնգամ մը մէկ կոնգակով մը Պապը ետքը հարիւրի մօտ վիճակաւորութիւն պահանջեց այս օտարականներուն համար, որ ան ատեններ ինք ալ Լնգղիայի Եկեղեցիներուն ու Լանքերուն բոլոր եկամուտներուն տասանորդը կ'առնէր. և քիչ ժամանակ ետքը՝ հինգին մէկ ուղեց : Հատ մը Լեքղաներ ալ խրկեց, որոնք երկրին ամէն կողմերը լեցուցին : Ետնք թոյլտուութիւն ունէին Պապէն՝ ուղած տեղերնին երթալու՝ առանց Եպիսկոպոսի և Վահանայի հրամանի, խոստովանանք ընելու, խորհուրդները մատակարարելու, փողոցներու և դպարներու մէջ սորվեցընելու և քարոզելու, և

սեղաններու վրայ հաղորդութեան խորհուրդը կատարելու, որ իրենց հետ կը պըտըտընէին :

Լ'նգղիայի թագաւորները ու Լալիսկոպոսները շատ անգամ այս բանին դէմ դրին, և երբեմն ալ թէև յաջողեցան, բայց Պապին զօրութիւնը այնչափ մեծ էր այն ժամանակ բոլոր Լաւոպայի վրայ, որ բնաւ մէկը երկար ժամանակ անոր դէմ չէր կըրնար կենալ :

Պէտք է զնոյն թագաւորին մէկը բանադրվեցաւ, և բոլոր թագաւորութիւնը նըզովքի տակ ինկաւ՝ մինչեւ հնազանդելուն պայմանաւ :

Լ'լան միջոցին Լ'ստուածային պաշտամունք մը չէր կատարվեր՝ Ս'կրտութիւնէն և հիւանդներու շաղթող տալէն 'ի զատ . Լ'կեղեցի մը չէր բացվեր . մոմ չէր վառվեր, և ոչ ալ զանգակ կը զարնվէր : Ս'եռնները անգամ Քրիստոնեայ Քահանայներով չէր թաղվեր : Լ'ս բաները վեց տարիէն

էվել քշեց, վերջապէս թագաւորը հընազանդեցաւ :

Քանզի Պապին խօսքը օրէնք էր . և Լ'կեղեցւոյ կանոնները մեռեալ գիր մը :

Ուրիշ թագաւոր մը որ Լալիսկոպոսներուն և Լ'դնուականներուն խորհրդով Պապէն իրենց անկախ ըլլալը հրատարակեց, ստիպվեցաւ հնազանդելու, և ծեծ ուտելու իր յանցանքին համար :

Ուրիշ թագաւորներ քիչ մը կարող եղան դէմ դնելու, և ժամանակ մը ազատ պահեցին թագաւորութիւնը այս հարստահարութիւններէն :

Բայց վերջապէս մեծ զօրութեան տէր՝ և ճարտար թագաւոր մը ելաւ շենրիկոս ու թերորդ, որ բացարձակ հրաման ըրաւ, թէ՛ Պապը ալ իշխելու չէ Լ'նգղիայի վրայ :

Լ'րկիրը խաղսեց այս բռնութենէն, և այն ժամանակէն 'ի վեր՝ (բաց 'ի մէկ քանի տարիէն, որ ան ատեններ Պապագաւան թագուհի մը աթոռը ելաւ), Լ'նգղիայի

Եկեղեցիքն առաջին պէս անկախ է Պապէն :

Սակայն անոր իշխանութեան տակը եղած ժամանակը Հռոմայի Եկեղեցիէն շատ գէշ բաներ մտեր էր : Սակայնորոյ Եպիսկոպոսները խորհեցան զանիկայ մաքրելու , և իր առջի վիճակին դարձունելու Սանքերը անանկ աւրելէր՝ ու նաև Պապական պաշտօնեաներով լեցվեր էին , որ հարկ եղեր էր փլցունել զանոնք :

Եպիսկոպոսները և գիտնականները հարկադրեցան՝ թէ Երեւելեան և թէ Երեւմտեան Եկեղեցւոյ Հայրապետներուն գլխաւորութեանցը մէջ նախկին Եկեղեցւոյ վիճակը փնտրուելու և սորվելու , և ամէն բան՝ անոր հետ , և Սուրբ Գրոց հետ բաղդատելու :

Ելատեցան Եկեղեցին այն օրինակին նմանցունելու , ուստի Եստուծոյ շնորհքովը անանկ աղէկ յաջողեցաւ , որ վերջապէս Ենգղիոյ Եկեղեցին որչափ որ կարելի էր՝ իր առջի Եռաբնական վիճակին դարձաւ ,

և մինչեւ այս օրս նոյնպէս կը մնայ :

Ուստի՝ անիկայ աղէկ հասկընալու համար , պարտիւք անոր հիմնկվան վիճակը ստորագրել :

Եռաջ անոր « Ենգղարձակութեանը » վրայօք քիչ մը բան խօսինք :

Ենգղիոյ առաջին Եկեղեցին՝ միայն նոյն երկրին բնիկ ժողովուրդը կը պարունակէր . բայց Խաւանտիայ նոյն թագաւորութեանը կցվելէն ետքը , այն կղղին Եկեղեցին ալ Ենգղիացւոյ Եկեղեցւոյն հետ մէկ եղաւ : Եյս երկու Եկեղեցիները՝ Ենգղիոյ և Խաւանտիոյ միացեալ Եկեղեցիներ ըսվածը կը կազմեն : Սկովտիայի Եկեղեցին՝ (այն երեք մասերուն միւս մասը , որով մեծն Բրիտանիայ կը բաժնւմի) , իր Եպիսկոպոսներովը Ենգղիայի և Խաւանտիայի Եկեղեցւոյն հետ կատարեալ հաղորդութիւն ունի , բայց զատ է անկէ . ինչպէս որ Յռնաստանի մէջի Յռնաց Եկեղեցին՝ որ կատարեալ հաղորդութիւն ունի Տաճկաստանի մէջի Յռնաց Ե

կեղեցւոյն հետ, ու տակաւին զատ է անկէ: կամ թէ Հնդկաստանու Հայոց Եկեղեցին, որ Տաճկաստանի Հայոց Եկեղեցւոյն հետ հաղորդութիւն ունի, բայց զատ է անկէ:

Երբոր Ենգղեացիք Հիւսիսային Եմբրիկան առին սկըսեցին Եկեղեցիներ շինել հոն. և ասոնք Ենգղիացւոց Եկեղեցիներէն՝ Երեսնի Եպիսկոպոսին տակը: Բայց երբոր այն երկու երկիրները զատվեցան, ու Սիացեալ Կահանգները զատ տեղութիւն մը եղաւ, ան ժամանակը հարկ եղաւ որ՝ Եմբրիկայի մէջն Ենգղիացւոց Եկեղեցին անկախ ըլլայ, և բուն իր Կահանայապետութիւնը ու սահմանադրութիւնը ունենայ:

Սասնորոյ Կահանգըրպէրրի Երբեպիսկոպոսը, և ուրիշ Եպիսկոպոսներ՝ երեք Եպիսկոպոս ձեռնադրեցին. և Եպիսկոպոս մըն ալ՝ Սկովտիայի Եպիսկոպոսները ձեռնադրեցին, և այս կերպով մէկ զատ Եկեղեցի մը եղաւ, բայց տակաւին Ենգղոյ Ե

կեղեցւոյն հետ հաղորդութիւն ունի:

Ուրեմն երեք Եկեղեցի կայ՝ երեքն ալ իրարմէ որոշ, բայց ամէնքը իրարու հաղորդ: Եւսջին՝ Ենգղեայի և Եւլա՝ ռիայի Սիացեալ Եկեղեցին, որ սովորաբար՝ Ենգղոյ Եկեղեցի կ'ըսվի. երկրորդ՝ Սկովտիայի Եկեղեցին, և երրորդ՝ Եմբրիկայի Սիացեալ Կահանգաց Եկեղեցին:

Եսս երեքը Կրիստոսի Եկեղեցիին մէկ ճիւղն են, որ կոչայ ըսվիլ « Ենկլեքան ճիւղ », ինչպէս որ Տաճկաստանի Յունաց Եկեղեցին, և Ռուսաստանու Յունաց Եկեղեցին, և Յունաստանի Յունաց Եկեղեցին՝ երեքը մէկէն մէկ հաղորդութիւն մը ունին իրարու հետ:

Երդ՝ երբ որ Ենկլեքան Եկեղեցիի վերայ կը խօսիմ, կ'ուզեմ որ երեքին վրայօք մէկտեղ խօսիլս իմացվի, բայց երբոր անոնց վրայ զատ զատ խօսելու ըլլամ, իրենց անուններովը պիտի խօսիմ. այսինքն՝ Ենգղեայի Եկեղեցի, Սկովտիայի Եկեղեցի, և Եմբրիկայի Եկեղեցի:

Լ'նգղիայի Լ'կեղեցին հինգ Լ'քեպիս-
կոպոս ունի . երկուքը Լ'նգղիայի մէջ , եր-
կուքը Խալանտայի մէջ , և մէյ մ'ալ Կալ-
կադա՝ Հ'նգկաստանի մէջ :

Լ'սոնցմէ զատ վաթսուէն ու չորս Լ'պիս-
կոպոս ունի . ասոնց ալ երեսուէր Լ'նգղիա-
յի մէջ են , տասներկուքը Խալանտայի մէջ ,
երկուքը Հ'նգկաստանի մէջ , մէկ հատ մը
Հ'նգկաստանի Հ'արաւային կողմը Ալյըն
մեծ կղզիին մէջ , մէկ հատ մը Ղ'իպիլդէն-
ուայի մէջ , մէկ հատ մը Լ'րոսաղէմի մէջ ,
մէկ հատ մը Լ'որ Օ'ելանտի մէջ՝ Խաղաղական
Ովկիանոսի մէկ կղզին , որ Լ'նգղիացեաց
տակն է , և ուրիշ տասն ու վեց հատ ալ
աշխարհի զանազան մասերուն մէջ , ուր որ
Լ'նգղիացիք տեղ ունին :

Լ'սոնցմէ 'ի զատ խել մ'ալ ուրիշ Լ'պիս-
կոպոսացուներ կայ՝ քիչ ժամանակէն օրհնը-
վելու . մէկ հատ մը Չինոսացուների հա-
մար . մէկ հատ մը Հ'արաւային Լ'իրիկէի
Գլուխ բարեյուսոյ ըսված տեղոյն համար :

։ յիշելիք յիշելիք ։

մէկ հատ մը Լ'բեմոնան Լ'իրիկէի հա-
մար . և ուրիշ մէկ քանի հատ ալ Լ'նգղի-
ացեաց բնակութիւն ունեցած տեղերուն հա-
մար :

Լ'սոնց բոլորը Լ'նգղիայի Լ'կեղեցւոյն
Լ'պիսկոպոսներն են . և ասոնց ամէնուն գը-
լուրը Ք'եանգըրպէրրիի Լ'քեպիսկոպոսն է ,
որ նաև բոլոր Լ'նգղիայի Լ'աջնորդն է :
Ուստի Լ'նգղիացեաց Լ'կեղեցին հինգ
Լ'քեպիսկոպոս ունի , և վաթսուէն ու չորս
Լ'պիսկոպոս :

Սկովտացեաց Լ'կեղեցին եօթը Լ'պիսկո-
պոս ունի , որոց ամէնն ալ Սկովտիայի մէջ
են , և իրենց գլուխը Սկովտիայի Լ'պէրտին
քաղաքին Լ'պիսկոպոսն է :

Լ'մերիկացեաց Լ'կեղեցին քսան ու եօթը
Լ'պիսկոպոս ունի . որոց քսան ու վեցը Սի-
ացեալ Լ'ահանգաց մէջն են . մէկն ալ Չի-
նաստանի մէջ , և մէկն ալ Կոստանդնու-
պօլսոյ մէջ :

Լ'յս Լ'պիսկոպոսներուն գլուխը միշտ

երկար ժամանակ եպիսկոպոսութիւն ընողն է։
Ուստի՝ Վրիստոսի Լեկեղեցոյն Մնկղի-
քան ճիւղին մէջ հարիւր և չորս Եպիսկոպոս
կայ, գլուխները և Լըքեպիսկոպոսները մէկ
տեղ առնելով, և այս Եպիսկոպոսները երկ-
րիս ամէն մասերուն մէջ տարածված են։

Ուրեմն ի՞նչ զարմանալի բան է, որ ու-
մանք անհաւատ կը կարծեն զՄնկղիացիներ-
ը, երբոր Մնկղեքան Լեկեղեցին աշխարհիս
մէջ բազմութիւններուն մէկն է։

Հիմայ այս երեք Լեկեղեցիներուն նկա-
րագրութիւնը պիտի ընեմ. որոնք առ հա-
սարաւի մի և նոյն անունով Մնկղեքան Լե-
կեղեցի կ'ըսվին. քանզի երեքին ալ հաւատա-
քը և երկրպագութիւնը ընդհանրապէս մի
և նոյն է, և մէկ հաղորդութիւն մը ունին.
անոր համար բոլորն ալ մի և նոյն անուան
տակ կրնան բովանդակվիլ, որ է Մնկղեքան
Լեկեղեցի։

Մնկղեքան Լեկեղեցին Մաքբելաշաւիզ
Պաշտօնեայներ ունի. այսինքն՝ Եպիսկոպո-

սութեան, Վրահանայութեան, և Սարկու-
ւագութեան երեք Սրբազան Կարգերն ալ
ունի, և անոնք կանոնաւոր յաջորդութեամբ
Մաքբեալներէն իջած ըլլալով։

Լեկեղեցոյ գլուխը կը ձեռնադրէ Եպիս-
կոպոսը՝ գոնէ ուրիշ երկու Եպիսկոպոսնե-
րու օգնականութեամբ՝ Կիկիոյ Ժողովքին
կանոնին սահմանադրածին պէս։

Վրահանայները և Սարկաւագները Լե-
պիսկոպոսներէ կը ձեռնադրվին. և այս Լե-
կեղեցոյս մէջ այս կերպով չի ձեռնադրու-
ված Վրահանան ու Սարկաւագը օրինաւոր
չի սեպվեր։

Մէն Վրահանայ և Սարկաւագ իր ա-
ռած կարգը Մաքբեալներէն ընդունած կը
սեպէ իր Եպիսկոպոսին միջնորդութեամբը։

Մնկղեքան Լեկեղեցիին մէջ ուրիշ պաշ-
տօնեայներ ալ կան. ինչպէս որ ուրիշ բո-
լոր Վրիստոնեայ Լեկեղեցիներուն մէջ ալ
կան. քայց Եպիսկոպոսութեան Վրահանա-
յութեան և Սարկաւագութեան Սրբազան

Կարգերը ունենալէն ետքը, ալ ուրիշ բանի վրայ խօսիլը աւելորդ է :

Ուստի՝ Լինկլեքան Լակեղեցին՝ Վաւերական, Լաքելական, և Կաթողիկէ Պաշտօնեայներ ունի :

Երկրորդ հարկաւոր խնդիրը՝ Լինկլեքան Լակեղեցոյն « Հաւատքն » է :

Եւս Լակեղեցին՝ Նիկիոյ և Կոստանդնուպօլսոյ մէջ սահմանված Հանգանակը կ'ընդունի, և ան ատենէն կ'ընդունի, երբ որ Քրիստոսէն 525, և 581 տարի ետքը եղան այն Սիւնհոգները յիշեալ քաղաքներուն մէջ, որ հասարակօրէն կ'ըսվի Հանգանակ Նիկիոյ :

Եւս Հանգանակը ամէն օր մեր Լակեղեցիներուն մէջ կարդացվիլ սահմանված է :

Բայց անոր մէկ մասը Երեւելեան Լակեղեցոյ Հանգանակէն կը տարբերի՝ Լինկլեքան Լակեղեցին Հոգւոյն Սրբոյ Բղիստմը՝ ի Հօրէ և յՈրդւոյ խոստովանելուն համար :

Սակայն չի պարսաւեր զԵրեւելեան Լա-

կեղեցին, որ այս խօսքերը չունի, ու « Լա Սորդու » չի գործածեր իր Հանգանակին մէջ :

Ընդ հակառակն Լինկլեքան Լակեղեցոյն պինտ ընտիր Ետուածաբանները կը խոստովանին, թէ՛ այն մեծ ժողովքներով հաստատված Հանգանակին մէջ այս բառերը չի կան :

Նոյն բառերը եօթներորդ դարուն՝ Երեւմտեան Լակեղեցիին մէջ մասնաւոր այն Լակեղեցոյն հանգամանացը նայելով հարկաւոր սեպվելուն համար :

Բայց մենք մեր Երեւելեան եղբայրները չենք մեղադրեր՝ նոյն բառերը չունենալուն համար, և ի՞նչպէս կրնանք մեղադրել զանոնք, երբ որ սկիզբէն յօրինված Հանգանակը անպակաս ունին : Ոչ ալ մեզի կուգայ թէ՛ նոյն բառերուն համար մեր մէջը երեւելի տարբերութիւն մը կայ, վասն զի մենք կը հաւատանք Սուրբ Պրոք, որ Սուրբ Հոգւոյն « Ի Հօրէ բղիսիլ » կը

վայելն , և « Որդւոյն ձեռքովը » խրկովիլը ,
ինչպէս որ Յովհաննէս Լեւտարանիչ կը
ղրուցէ : (ԺԵ . 26) : Սենք միայն սա մտքե-
րով կ'ըսենք թէ 'ի Հօրէ կը բղխի , մէյ մը
որ՝ « Հոգի Վրիստոսի » ըսվելուն համար :
(Ղաղատ . Գ . 6 : Լւ . Ա . Պետր . Ա . 11) :
Սէյ մըն ալ որ՝ « Վրիստոսէ կ'ելլէ » ըս-
ված ըլլալուն համար : (Յովհ . ԺԶ . 7) :
Ու մէյ մըն ալ՝ « Վրիստոսէ կ'առնէ » ըս-
վելուն համար : (Յովհ . ԺԶ , 14) : Չէ նէ
շխտակը՝ այս բաներուն վրայօք վէճ ընելու
ուրիշ պատճառ մը չի կայ :

Լնկիլքան Լակեղեցին՝ ինչպէս որ կ'ըն-
դունի 'Լիկիոյ Հանգանակը , անանկ ալ ա-
նոր մէջն Վրիստոնէութեան գլխաւոր Սար-
դապետութիւններն ալ կը խոստովանի՝ կը
գրկէ՝ և կը սիրէ . այսինքն՝ Լմենասուրբ Լ-
րորդութեան Հօր և որդւոյ և Սուրբ Հոգ-
ւոյն վարդապետութիւնը , Վրիստոսի վե-
րաբերեալ վարդապետութիւնները , անոր եր-
կու բնութիւնը՝ մէկ Լնձամբ անբաժանելի մի-

ացած , Հօր Լստուծոյ հետ ունեցած Հա-
մագոյութիւնը , և անոր՝ Սուրբ Հոգւով
Յղանալուն վերաբերեալ այն ամենամեծ
ճշմարտութիւնը , անոր՝ Լմենսօրհնալկու-
սէն ծնանիլը , անոր Հարչարանքները , մա-
հը , յարութիւնը , համարձեւմը , Հօր Լս-
տուծոյ աջ կողմը նստիլը , և աշխարհս դա-
տելու համար միւսանդամ դալուստը :

Ս'ընդունի ևս Հոգւոյն Սրբոյ վարդա-
պետութիւնը , մէկ կաթուղիկէ և առաքե-
լական Լակեղեցի մը , մեղաց թողութեան
համար մէկ Սկրտութիւն մը , մեռելներուն
յարութիւնը , և հանդերձեալ կեանքը :

Լպա ուրեմն Լնկիլքան Լակեղեցին Լ-
ռաքելական յաջորդութամբ՝ ճշմարիտ նախ-
կին և կաթուղիկէ Հաւատքը ունի , և ըս-
կիղբէն 'ի վեր բռնած է :

Հիմայ գանք անոր Լրարողութեանցը
և Օսեսրուն վրայօք խօսելու :

Վրիստոսի սահմանադրած Սկրտու-
թեան և Լմենասուրբ Հաղորդութեան խոր-

հուրդները ամենայն յարգութեամբ կ'ընդունին ու կը պահէ Մեկկեքան Լեկեղեցին : Սկրտութեան խորհուրդը տղոց կը մատակարարէ , և ասիկայ՝ որչափ որ կարելի է , անոնց ծնանելէն քիչ մը ժամանակ ետքը կ'ըլլայ : Կանոնը աս է , որ՝ անոնց ծնանելէն մէկ երկու կիրակի ետքը , կամ անոնց մէջ պատահած տօնակմբութեան օր մը Սըկըրտվի տղան՝ թէ որ կարելի է :

Թուրով , Խաչին նշանաւ , և Մենասուրը Լորորդութեան Մնուամբը կը մկրտէ զերախայն , և Մեկկեքան Լեկեղեցւոյն զաւանութիւնը այս է որ՝ Սկրտութեամբ տղան Վրիստոսի Լեկեղեցւոյն անդամ կ'ըլլայ , և Որդեգիր Մտուծոյ :

Մեկկեքան Լեկեղեցւոյն մէջ միայն Լպիսկոպոսը կամ Վահանայն կրնայ մատակարարել Մենասուրը , Հաղորդութեան խորհուրդը :

Մեկկեքան Լեկեղեցին կը խոստովանի թէ՛ Ճմարիտ Վրիստոնեայները այս խորհուրդիս

մէջ Վրիստոսի Սարմինը և Մրիւնը ճշմարտապէս կը ճաշակեն , ու կ'ուտեն . սակայն չարագործութեամբ անարժանները՝ թէև մարմնապէս և համարձակ կ'ուտեն ու կը խմեն Վրիստոսի Սարմինը և Մրիւնը , բայց Վրիստոսի մասնակից չեն ըլլար . հապա եվելօք իրենց դատապարտութիւնը կ'ուտեն ու կը խմեն :

Մեկկեքան Լեկեղեցւոյ մէջ թէ Հացը և թէ Վինին ժողովուրդին կը տրվի՝ Փրկչին սահմանադրածին նման . սակայն նոյն խորհուրդը չի մատակարարվիր՝ մինչև որ Վահանայէն զատ գոնէ երկու կամ երեք հոգի չի գտնվի :

Լեկեղեցիներուն ոմանց մէջ ժողովուրդը ամիսը անգամ մը կ'առնէ , ոմանց մէջ ալ առաւել յաճախակի . և ոմանց մէջ ոչ այնքան ստէպ : Բայց ընդհանրապէս ամէն մարդ պարտաւոր է՝ գոնէ Նոնդեան , Օատկի , և Հոգեգալստեան երեւելի օրերը առնելու :

Անկերքան Ակեղեցին՝ մեր Փրկչին Ամենասուրբ Սարմնոյ և Արեան խորհուրդը միշտ յաճախակի ընդունելու համար եկելովք յորդոր և խրատոյս կուտայ ժողովուրդին :

Ղարշմի Սրբազան Արարողութիւնը Սրկրտութենէն ետքը կ'ըլլայ , բայց չէ թէ անմիջապէս . այլ որ ժամանակ որ տղան խելահաս ըլլայ , ու պատրաստովն անձամբ հաստատելու այն ուխտերը , որ Ս'կրտված ժամանակը կնքահայրները ըրած են իրեն համար :

Այս խորհուրդը միշտ Ապիսկոպոս մը կը կատարէ՝ ձեռքը անոր վրայ դնելով , և անոր համար աղօթք ընելով : Սովորութիւնը աս է որ՝ մէկը գորշմըկէն ետքը Հաղորդութիւն առնելու անտէր է :

Անկերքան Ակեղեցին . « Արձակման » համար կը հաւատայ թէ՛ Վրահանայն իշխանութիւն , և՛ հրաման ունի Աստուծմէ՝ զըջացողներուն մեղացը թողութիւն զրուցելու և կամ հրատարակելու . բայց այս զօ-

րութիւնը իբր իր կողմանէ 'ի գործ դնելու չէ , հապա Վրիստոսի իբր մէկ փոխանորդը . և Արձակումը ամենեւին մէկ զօրութիւն մը չունի՝ երբոր ընդունողը անգեղջ ըլլայ , և Վրիստոսի վրայ ճշմարիտ ու անկեղծ հաւատք մը չունենայ :

Անկերքան Ակեղեցին Աղօթամատոյց մը կը գործածէ ընդհանուր պաշտամանց համար : Ամէն առտու և իրիկուն ժամերգութիւն ունի , նաև բոլոր կիրակի և ուրիշ Տօնախմբութեան օրերը :

Աստուածային պաշտամունքներ և արարողութիւններ սահմանած է Ամենասուրբ Հաղորդութեան համար , Ս'կրտութեան , Ղարշմի , Ամուսնութեան պսակի , Հիւանդի այցելութեան , Հիւանդի Հաղորդութեան , Թաղման , Կանանց որդեծնութենէն ետքը գոհութեան , Ապիսկոպոսներու՝ Վրահանայներու և Սարկաւագներու () Երհնութեան և Չեռնադրութեան , Ակեղեցի Օրհնելու , և ուրիշ Վրիստոնէական Արա-

բողոքութիւններու ու Նօնսերու համար : Իսկ
 ըր տարւոյն ամէն օրական ժամերգութեան
 ցը մէջ շին և Վոր Կտակարանը կարգա-
 ցունել կուտայ՝ ամէն օրվան համար զատ
 զատ բաժնրված . նոյնպէս Գաւթի Սաղ-
 մոսները ամէն ամիս ամբողջ կը կարգացվի :

Իր Լստուածային պաշտամանցը մէջ
 կան Լորդեր, Գոհութիւններ, և Լըթթներ :

Եպիսկոպոսները Վահանայները և Սար-
 կաւազները յատուկ Լակեղեցական Օգեստ-
 ներ կը հազնին՝ ժամերգութեան պաշտօն
 վարած ատեննին :

Լնկլեբան Լակեղեցին Տօնախմբութեան
 և Պահք օրեր ալ ունի :

Տէրոջը օրէն ՚ի զատ իրեն տօնախմբու-
 թեան օրերը ասոնք են : Նոնուդ Տեառն
 մերոյ, և անոր թլխատութիւնը, Յայտնու-
 թիւն, Յարութիւն՝ որ երեք օր է . Համ-
 բարձումն, Հոգեգալուստ՝ որ երեք օր է .
 Լեւտումն Լմնօրհնեալ Կուսին, և անոր
 Տաճարը Բնծայվիլը, Նոնուդ Յովհաննու

Սկրտչի, Տօն Սրբոյն Պետրոսի, Սրբոյն
 Յակոբայ մեծին, Սրբոյն Յովհաննու Լեւ-
 տարանչի, Ս . Սատթէոսի, Ս . Սարկոսի,
 Սրբոյն Ղուկասու, Սրբոյն Փիլիպպոսի, և
 Ս . Յակոբայ փոքու, Ս . Լնդրէասայ, Ս .
 Թովմասայ, Ս . Բարթուղիմէոսի, Ս . Սի-
 մօնի, և Ս . Յուդայի, Ս . Սատաթիայի,
 Ս . Պողոսի, Ս . Բառնաբասայ, Ս . Ստե-
 փաննոսի, Լնմեղ Սանկանց Բեթլեհէմի,
 և Սրբոյն Սիբայէլի Հրեշտակապետին, և
 ըրոր Հրեշտակաց, և տօն ամենայն Սրբոց :

Լսանկով Լնկլեբան Լակեղեցին՝ Կիրա-
 կիէն ՚ի զատ, որ սկիզբէն հետէ միշտ՝
 Սուրբ կը պահվի, երսունըմէկ Տօնախմբու-
 թեան օր ունի :

Կիրակիներուն մէջ՝ Հոգեգալուստէն
 ետքը առաջին Կիրակին երեւելի է, որ ան
 օրը Տօն Լմնաստուրբ Լորորդութեան կը յի-
 շատակվի :

Նաև անմիջապէս Նոնդեան նախըն-
 թաց չորս Կիրակիները՝ իրենց մէջի եղած

շաբաթներովը՝ պատշաճ ժամանակներ են
զգուշաւոր պատրաստութեան Նոյնդեան
համար :

Լինկլիքան Լակեղեցւոյն ՊաՏ.ք օրերը
տարւոյն բոլոր Ուրբաթ օրերն են, նաեւ
Սեծ ՊաՏ.քը, որ Օգոստէն առաջ քառ-
սուն օր է. նաեւ երեք օր ՊաՏ.ք՝ Համբար-
ձումէն առաջ : ԼՄԼ և երեք օր մասնաւոր
ՊաՏ.ք մը՝ Սեծ Պահոց երկրորդ շաբթուն
մէջ. երեք օր ՊաՏ.ք՝ Հոգեգալստեան եւ
տեւի շաբթուն մէջ. երեք օր ՊաՏ.ք՝ Սեպ-
տեմբերի երրորդ շաբթուն մէջ. երեք օր
ՊաՏ.ք՝ դեկտեմբերի երրորդ շաբթուն մէջ :

ԼՄս վերջին չորս ՊաՏ.քերը տարւոյն
չորս Լաղանակներուն համար են, և մասնա-
ւոր կերպով մը կը յիշատակվին աղօթքնե-
րով Լակեղեցականներուն համար՝ հետեւեալ
կիրակիները Վահանայ և Սարկաւագ ձեռ-
նադրելու որոշեալ ժամանակներ ըլլալուն
համար :

ԼՄս Լակեղեցին մէկ տարին հարիւր օ-

րի չափ ՊաՏ.ք ունի :

ԼՏա Լնկլիքան Լակեղեցւոյն բոլոր հան-
գամանքները նկարագրելնուս ետքը, հիմա
օգտակար կը համարուիմք անոր մէջի չեղած
բաներն ալ պատմել :

Վաւարանի վարդապետութիւնը չըն-
դունիր, հապա բոլորովին կը հերքէ՝ թէ
Սուրբ Վրոց և թէ նախկին Հայրապետաց
դէմ ըլլալուն համար :

Կը հաւատայ թէ՝ Հաւատացեալ ննջե-
ցելոց հոգիները խաղաղութեան և հանգըս-
տութեան մէջ են՝ վերջին օրվան Լըրանու-
թիւնը կատարելապէս վայելելու յուսով :

Պատկերներու կամ Լըձաններու երկըն-
պագութիւն չընեն : Թէ և պատկերներ կը
գտնուվին իր Լակեղեցիներուն մէջ, բայց ԼՄս-
տուծոյ տունը դարդարելու մտքով միայն
դրված կ'ըլլան անոնք, և ժողովուրդը ամե-
նեւին յարգութիւն մը չեն ընծայեր անոնց :

Սուրբերուն աղօթելու սովորութիւնն
ալ չունի. ճշմարիտ հաւատքով հրաժար-

վածները յարգելու ժամանակը , և անոնց յիշատակութիւնը՝ թէ՛ Լ՝մենասուրբ Հաղորդութեան Խորհուրդին մէջ , և թէ՛ սահմանված Տօներնուն մէջ կատարած ատենը , անոնց աղօթք չի մատուցաներ :

Լ՝ստուծոյ աղօթք ըրած ատենը՝ որ շնորհք տայ մեզի անոնց բարի վարքերուն հետեւելու , զանոնք սուրբ մարդոց վիճակէն վեր չի բռներ : Կը հաւատայ թէ՛ անոնք մեզի հետ Սուրբ միութեամբ եղբայրներ են , և այս դիտաւորութեամբ կը յարգէ և կը սիրէ զանոնք :

Լ՝նկիւքան Լակեղեցին Լ՝մուսնութիւնը չարգիլէր իր Լակեղեցականներուն , հապա աղատութիւն կուտայ , որ բոլոր Լպիսկոպոսները , Վահանայները , և Սարկաւագները անխտիր այն վիճակին մէջ գտնուին , (թէ՛ Լ՝մուսնութեան , և թէ՛ Լ՝նկնուութեան) , որն որ Լ՝ստուածապաշտութեան եւ վերջ կը ծառայէ :

Լ՝սանկ էր հին ատենները Լ՝նդդիաց-

ւոց Լակեղեցւոյն մէջ :

Լ՝նկիւքան Լակեղեցին՝ Հոռմայի Պապին գլխաւորութիւնը չի խոստովանիր . այլ զանիկայ հին աթոռներու Հայրապետներուն իբր մէկը կ'ընդունի՝ Լագալիայի միայն մէկ մասին վրայ առաջուց իշխանութիւն մը ունենալով : Ուրիշ Լակեղեցիներու վրայ իշխանութիւն ունենալու իրաւունքը կը մերժէ , և կը հաւատայ թէ՛ ընդհանուր տիրողութեան պահանջմունքը՝ թէ՛ Սուրբ Գրոց , և թէ՛ նախկին սովորութեան հակառակ է :

Լ՝նկիւքան Լակեղեցին՝ մեր Տէր և Փրօկիչ Յիսուս Վրիստոսը ընդհանուր Լակեղեցւոյ մի միայն գլուխ կը խոստովանի . և այն զանազան Ուղղափառ Լակեղեցիները՝ նոյն կաթողիկէ Լակեղեցւոյն իբր ճիւղերը :

Լ՝նդ հակառակն՝ Լ՝նկիւքան Լակեղեցին՝ ուրիշ Լ՝յաղաւան Վրիստոնէից տարբեր կրօնքներուն հետ չի միաբանիր . որոնք Լ՝նդդիայի մէջ ալ կան , ու Լ՝մերիկայի մէջ ալ :

ՊԺբաղդաբար պատահեցաւ որ՝ վերջին

200 տարւիանս մէջ ժամանակ ժամանակ լճանդաւորներ ելան, և լճեղիցացոյ լակեղեցիէն զատվեցան. որոնցմէ ոմանք շատ բազմամարդ եղան: Լսոնց մէջէն ալ ուրիշ լճանդաւորներ ելան. անանկ որ՝ լճեղիւսի և լճերիկայի մէջ հիմա քսանըհինգէն մինչև երեսուն այլ և այլ տեսակ լճանդաւորներ կան:

Լսա լճանդաւորները իրարմէ շատ կը տարբերին, և լճկլիքան լակեղեցւոյն հետ ամենեւին հաղորդութիւն մը չունին:

Լճկլիքան լակեղեցւոյն լճօթամատոյցը չեն ընդունիր. ոչ ալ անոր Տօնախմբութիւնները և Պահք օրերը կը պահեն:

Լսոնցմէ որը կ'ըսէ թէ՝ Սկրտութիւնը միայն չափահաս մարդոց ըլլալու է. որը կ'ըսէ՝ թէ Քրիստոս մեր Փրկիչը Լստուած է. որը թէ՝ բոլոր բարի ու չար մարդիկ պիտի փրկուին, որը թէ՝ ոչ Սկրտութիւնը մատակարարվելու է, և ոչ Տէրունական Ռեթրիքը:

Եւս Բողոքն ալ Լճաբեղական պաշտօնեայներէ, պսինքն՝ Լակիսկոպոսներէ, Քահանայներէ, և Սարկաւագներէ զըրկած են: Լսոնք թէ և իրարմէ կը տարբերին, բայց բոլորն ալ այս բանիս կը միաբանին թէ՝ իրենք այն երեք Սրբազան Կարգերը չունին, և այս բանովս անոնց ամենքն ալ լճկլիքան լակեղեցիէն կը զատվին:

Լսոնք ուրիշ շատ զանազան բաներով ալ կը տարբերին նոյն լակեղեցիէն, ինչպէս որ առաջ ալ ըսինք. և անոր համար զգուշութիւն պէտք է, որ ասոնք լճկլիքան լակեղեցւոյն հետ չի խառնուվին. քանզի մէջերնին շատ քարոզիչներ ունին, որոնք աշխարհի զանազան մասերուն մէջ իրենց վարդապետութիւնները կը տարածեն. և կ'ըլլայ որ անարդարաբար լճկլիքան լակեղեցւոյն անդամները կարծրվին ասոնք սխալմամբ, որ իրենք ալ բնաւ չեն ուզեր ասանկ երեւնալ:

Լսոնցմէ ոմանք Լակիսկոպոս կը կոչեն

ինքըզինքնին . բայց ճշմարիտը աս է որ՝ անոնցմէ որ մէկն ալ Լպիսկոպոս է :

ԼՆ Սրբազան Կարգը՝ Վահանայուն Թեան և Սարկաւագութեան Կարգէն վեր բան մը չեն սեպեր :

ԼՆ գղիայ եկող և բնակող ամէն Եկեղեցական պարտի իր Լպիսկոպոսին Վկայականը իր քովը ունենալ . ու թէ որ չունի , հաստատ հաւատալու է որ՝ անիկայ ԼՆ կլիքան Եկեղեցիէն չէ :

Տասնութեց տարիէն ՚ի վեր Տաճկաստանի մէջ Հայոց համար աշխատող Սիսիւնարներուն բնաւ մէկն ալ ԼՆ կլիքան Եկեղեցիէն չէ : ԼՆ նոք կամ Վրճալիկէշնալիսդեն , և կամ Բրէզպիդիլիլն . այսինքն՝ կամ Վոդովական , և կամ Երիցական , որոնք ԼՆ կլիքան Եկեղեցւոյն Երարողութիւնները և Սահմանադրութիւնները չեն ընդունիր , ու բոլորովին կը մերժեն , և նոյն Եկեղեցւոյն չեն հնազանդիր , գլխովին զատված են անկէ :

ԼՆ կլիքան Եկեղեցին որ անոնց Վահա-

նայները կ'ընդունի , որ ալ անոնց գործքերուն կը հաւնի : Ինք անոնց հետ ամենեւին գործ մը չունի . անոնց ըրած գէշութիւններուն ամենեւին պատասխանատու չէ . և որ ալ անոնց ըրած բարի գործքերուն համար իրենց գովութիւն մը կ'ընծայէ :

Երեւելեան Եկեղեցիներուն մէջ հերձուածողութիւններ կամ երկպառակութիւններ ելլելուն ամենեւին չի հաճիր . և որ ալ թող կուտայ իր Եկեղեցականներուն մէկին՝ զանոնք գրգռելու : ԼՆ կը փախաքի որ՝ Երեւելեան Եկեղեցին ամենայն Եստուածպաշտութեամբ ու Եմաստութեամբ յառաջանայ ու զօրանայ՝ մինչեւ որ Վրիստոսով կատարելութեան նման հասակին հասնի :

Կ'ուզէ որ ան Եկեղեցին անբաժան ու պարզ մնայ . և չուզեր տեսնալ՝ որ անկէ հերձուածողութիւններ ու աղանդներ ելլեն :

Երբ յօժարի որ անոր հաւատքին մէջ մէկ օգնական մը ըլլայ , և կ'ուրախանայ նախկին միութեամբ անոր հետ միանալու , և

Լեւոտարանի գիտութիւնը և օրհնութիւնները բոլոր աշխարհ տարածելու համար՝ աւոր հետ մէկ ըլլալու կը ցանկայ :


Կ'ուզէ որ ամէն բարի խօսքով ու գործքով օգնէ անոր , և շատ զանազան օգուտներ վաստակի անկէ . անանկ օգուտներ , որ Լեւեւեւան հին Լեւեւեւեւեւեւ հետ սերտ ծանօթութիւն ընելէն կրնան յառաջ գալ :

Լսոնք են Լեւեւեւեւեւ Լեւեւեւեւեւեւ Լեւեւեւեւեւ Լեւեւեւեւեւեւեւեւեւ վրայ ունեցած ըզգացումները :

Լեւեւեւ Լեւեւեւեւեւեւ որ՝ Լեւեւեւեւեւեւեւ և Լեւեւեւ Լեւեւեւեւեւեւեւ , որ ամէն մարդ՝ իր ինչ բանի պարտաւոր ըլլալը գիտնալու՝ սրտով փափաքի , և ջանք ընէ , որ Վրիստոսի հօտը՝ որ իրարմէ պոստալի ժամանակ բաժնեւած ու զատւած է , օր մը կրկին նոյն նախկին միութեան մէջ մտնայ , և նորէն մեր Տէր Յիսուս Վրիստոս մի միայն հովուին տակը ժողովրդի Լեւեւ :

Մ Լ Բ Գ

Ե Ղ Օ Թ Վ Ս Ի Ո Ի Թ Ե Լ Վ



Ո՛վ Լեւեւեւեւ Լեւեւեւեւեւեւ Լեւեւեւեւեւեւեւեւեւեւ մեր մի միայն Փրկիչ և Տէր Յիսուս Վրիստոսի Հայրը՝ Ընորհք պարգեւէ մեզի՝ որ բոլ ժողովուրդդ ենք , զի միտքերնիս բերենք այն ամենամեծ վտանգները , որոնց մէջ կ'իյնանք մեր թշուառ երկպառակութիւններովը :

Ս Երցու մեզմէ բոլոր ատելութիւնը և նախապաշարմունքը , և բարի միութեան և համակամութեան արգելք տրվող ամէն բաները , որ՝ ինչպէս որ միայն մէկ Սարմին մը կայ , և մէկ Հոգի մը , և մէկ Յոյս մը մեր կոչմանը , մէկ Տէր , մէկ Հաւատք , մէկ Սիրտութիւն , մէկ Լեւեւեւեւ , և մէկ Հայր մեր ամէնուս , անանկ ալ մենք ամէնքնիս

ասկէ ետեւ մէկ սիրտ և մէկ հոգի ըլլանք՝
 ճշմարտութեան՝ և խաղաղութեան՝ հաւա-
 տոյ՝ և սիրոյ սուրբ կապով լիացած . և
 մէկ մտքով և մէկ բերնով քեզ փառաւո-
 րենք՝ մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհ-
 քովը . Ամէն :

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL035097

